

ԳՐԻԳՈՐ ՊԻԽՏ ՇԻՐԱԿԱՅԻ

Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերում պահպանվել են բազմաթիվ ժամանակագրական միավորներ, որոնք դուրս են մնացել պարմագրքի հայերեն միակ հրապարակությունից և երբեմն օգնում են պարմական փաթեթի հարցերի լուծմանը: Այդպիսի մի հարցի պարզաբանմանն զգալի նպաստ են բերում Մարենադարանի թիվ 1898 և 2965 ձեռագրերը¹: Խոսքը վերաբերում է 11-րդ դարի երկրորդ կեսի մի գինվորական գործչի, որ Շիրակից էր և Բագրատունյաց թագավորության անկումից հետո ծառայում էր Բյուզանդական կայսրությանը: Նրա անունը հայ պարմիչները չեն փախս, այլ նշում են միայն նրա պաշտոնից ծագող մականունը. Մարթնոս Ուռնայեցին՝ **Պեխպ, Պիխպ, Եպիխպ, Վարդան Արևելեցին՝ Բեղդ**:

Մարթնոս Ուռնայեցին գրում է. «Եւ մի ոմն Նայոց քաջ զօրականացն... Պեխպ անուն, որ էր քուկ Անրիթբայ քաղաքին»²: Այնուհետև նա պարմում է, թե ինչպես 1065 թվականին քաջ զորավար Պեխպն իր զորականներով պարսիստար Ուռնայում էր գտնվում, երբ այն թուրքերի հարձակմանը ենթարկվեց: Տեղի դուքսի հույն զորավարը թշնամուն դիմադրություն ցուցաբերած Պեխպին օգնելու փոխարեն դավաճանական դիրք գրավեց: Պեխպի վճռականության և խիզախության շնորհիվ թշնամին Նշենիկ բերդում պարսվեց, և քաղաքը փրկվեց թուրքերից, բայց հույն զորավարի արարքի մասին նա նամակով հայրենց Տուրի³ կայսրին, իսկ վերջինս դաժան հաշվեհարդար փետավ դավաճանի հետ⁴:

Մեկ այլ տեղում իշխանի մահը ներկայացնելիս Մարթնոս Ուռնայեցին գրում է.

1 Սամվել Անեցու Ժամանակագրությունը հրապարակելիս Ա. Տեր-Միքելյանն օգտագործել է այս երկու մատյանը (Խամսապարսխանաբար Ա և ԺԳ-օրինակներ), սակայն դրանց մեջ եղած մի շարք ժամանակագրական միավորներ տեղ չեն գտել գրքում (Սամուելի քահանայի Անեցույ Նաւարմունք ի գրոց պարմագրաց)՝ յաղագս գիտքի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ Է-Թ-): Ձեռագրերից առաջինը (թիվ 1898) ժողովածու է, գրչության ժամանակը, վայրը, գրիչն անհայտ են, համարվում է ԺԳ դարի մատյան: Վերջին մասում նշված են հիմնականում Կիլիկիայի պարմությանը եւ խաչակիրներին վերաբերող հարվածներ, որոնք զանց է առել Ա. Տեր-Միքելյանը, իսկ բոլորովին վերջերս դրանց մի մասը հրապարակել է Լ. Տեր-Պետրոսյանը՝ սակայն սկսելով 1074 թվականին վերաբերող տեղեկությամբ (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, Կ. Ա. Երևան, 2005, հավելված 2, էջ 483-484): Երկրորդ մատյանը (թիվ 2965) նույնպես ժողովածու է (ԺԷ դ.), գրչության հանգամանքներն անհայտ են: Նիշյալ ձեռագրերում եղած հավելումները տես **Կ. Մարթնոսյան**, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երևան, 2009, էջ 114-120:

2 **Մարթնոս Ուռնայեցի**, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Ն. Բարթիկյանի), (գրքում գերեզման է ժամանակագրության գրաբար բնագիրը Վաղարշապատի 1898 թ. հրապարակությունից), Երևան, 1991, էջ 170: Ուռնայեցուց օգտվելով՝ Պեխպին հիշարարկում է Սմբատ Սպարապետը «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 84): (Այնուհետ՝ Ուռնայեցի)

3 Կոստանդին Ժ Դուկաս (1059-1067):

4 **Ուռնայեցի**, էջ 170:

«**Եպիսոպ** իշխանն Նայոց, այր քաջ և պարերազմող **ի Տանէն Շիրակայ**»⁵, ապա նշում, որ կայսրը նրան հարկադրաբար էր քաղկեդոնական դարձրել, բայց նա ծածուկ պահում էր Սուրբ Գրիգորի հավաքը: Իսկ սպանվեց իշխանը Անդրիոն բերդում, երբ հիվանդ էր («հիւանդացեալ ի բերդն, որ կոչի Անդրիոն»), և կայսեր կողմից նրա մոտ ուղարկված «Նոռմ արեղայ» խոստովանահայրը քնած ժամանակ բարձով խեղդեց նրան («Եւ չարաչար սպանանէր զայր հօգօր և քաջ՝ չարագործ և պիղծ կրօնաւորն Նոռմոց»), որից հետո իշխանի գորականները սպանեցին չարագործին⁶:

Մարթնոս Ուռնայեցու աշխարհաբար թարգմանությունը հրապարակելիս Ն. Բարթիկյանը իշխանի անվան մասին հետևյալ ծանոթագրումն է արել. «Պիսոպը (Եպիսոպ) անուն չէ, այլ հունարեն էպիսկոպոս բառը, որ վերակացու, փեսուջ է նշանակում»⁷:

Վարդան Արևելցի (ԺԳ դար) գրում է. «...սպանաւ **Բելիդն, իշխանն Շիրակունի**, որ վասն յոյժ լաւութեանն նեղեալ սիրով ի կայսերէ՝ եղև հոռոմ»⁸, ապա ավելացնում է, որ նրան խեղդամահ է արել կայսեր նշանակած հոռոմ (հույն, քաղկեդոնական) խոստովանահայրը «ի բերդն իւր **յԱնդրիօնն**»⁹: Այդ բերդը գտնվում է Կիլիկիայում՝ Մարաշից արևմուտք¹⁰:

Նարեկ է նշել, որ քաղկեդոնականությունն ընդունած այս իշխանին անդրադարձել է Միքայել Չամչյանը: 1060-ական թվականների մասին պատմելիս գրում է. «Ի սմին ժամանակի իշխան ոմն Նայոց Շիրակունի Անեցի բնակեալ ի սահմանս Փոքուն Ասիոյ՝ Խաչապուր կամ Խուրապար անուն, վեսար կոչեցեալ..., որ ի գիրս Նայոց Պիսոպ կոչի»¹¹:

Անրիոքի դուքս Խաչապուրին հիշարակում են բյուզանդական հեղինակները, երբ անդրադառնում են 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում պարություն կրած Ռոմանոս Դ Դիոգենես (1067-1071) կայսեր ողիսականին, որին այդ պարությունից և սելջուկների ձեռքը գերի ընկնելուց հետո Կոստանդնուպոլսում աթոռանկ հայտարարեցին, և գահակալեց Միքայել Է Դուկասը (1071-1078): Սելջուկյան սուլթան Ալփասլանից (Ալփ Արսլան) որոշ պայմանների դիմաց ազապ արձակված Դիոգենեսը փորձեց իրեն հավաքարիմ մտացած ուժերով գահը գրավել, և նրա սակավաթիվ աջակիցներից էր Անրիոքի դուքս Խաչապուրը: Ինչպես հայրնի է, Դիոգենեսը ձախողվեց և ողբերգական վախճան ունեցավ: Իսկ Խաչապուրի մասին ասվում է, որ նա գերության մարմոկեց:

5 Անդ, էջ 230: Մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:

6 Անդ, էջ 228-230: Տեղեկությունը գերելով է Անրիոքի դուքս Վասակ Պահլավունու (Գրիգոր Մագիստրոսի որդու) սպանության մասին պատմությունից հետո, որն Ուռնայեցին դրել է 1076 թվականի փակ, թեև դեպքը տեղի է ունեցել 1078 թ. (**Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 418):

7 Անդ, էջ 500:

8 **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, (գրքում գերելով է Վենետիկի 1862 թ. փալագության գրաբար տեքստը) աշխարհաբար թարգմանությունը՝ Գ. Բ. Թոմսոնյանի, Երևան, 2001, էջ 109:

9 Անդ, էջ 110: Մոսկովյան հրապարակության մեջ. «...սպաւ հայր խոստովանութեան նորա Աբել հոռոմ ամ մի» (Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 140):

10 **Թ. Նավոյան, Սր. Մելիք-Բախչյան, Ն. Բարսեղյան**, Նայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 260: Կիլիկյան մի ձեռագրի 1332 թ. հիշարակարանում նշվում է, որ այն գրվել է «մերձ յաստամապահ ամրոցն, որ կոչի Անդրիոնի բերդ» («ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշարակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 251): Անդրիոն անունը շուրջ երկուսուկես դարի ընթացքում հայկական միջավայրում բնականորեն կարող էր դառնալ Անդրոն: Ավելի ուշ շրջանում թուրքերենի ազդեցությամբ կոչվել է նաև Էնդրոն (Նայաստանի ազգային արվեստ, հ. Բ, Երևան, 2008, էջ 49, 50, 55, 62, 80-81, 84, 88, 151, 167):

11 **Մ. Չամչյանց**, Նայոց Պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 972, տե՛ս նաև **Ն. Աճառյան**, Նայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 468:

Անտիոքի դուքս Խաչատուրի և Խաչակյան աղբյուրներում հիշված Պելիպի նույնացմանը անդրադարձել է Ժան Լորանը¹²: Նա գրում է, որ Խաչատուրը զարմանալիորեն չի հիշվում Խաչակյան աղբյուրներում, ապա նշում է, որ 1067-ին Անտիոքի դուքսն էր Նիկեփորիցեսը, որին հաջորդել է Նիկեփորոս Վարանիարեսը, այնուհետև՝ Խաչատուրը: Նկատարարվում է հիմնական շեշտը դնում է այն փաստի վրա, որ Մարթեոս Ուռհայեցին 1065 թ. Պելիպին համարում է Անտիոքի դուքս, որը հնարավոր չէ, և դրանով մերժում այս երկուսի նույնացումը¹³: Ըստ նրա՝ Պելիպը կարող էր ոչ թե Մեծ Անտիոքի, այլ Բաալբեյի Անտիոքի կառավարիչը լինել: Բայց Ժ. Լորանը, ավելի հեռուն գնալով, հայ պարմաբաններին մեղադրում է այն բանում, որ նրանք երկու քաղաքներ գործիչների նույնացմամբ փորձել են «շահագործել Պելիպ=Եպիփան=Խաչատուրի կեանքն ու քաջությունները» և դրանով գոհացնել «հայ ազգի եասսիքությունը»¹⁴:

Ինդրին անդրադարձել է Ե. Քասունին՝ փորձելով հակադարձել Ժ. Լորանին: Նա մասնավորապես նշում է, որ 1060-1067 թթ. Անտիոքի դուքս Նիկեփորիցեսը ինչ-որ ժամանակամիջոցում պաշտոնազրկված է եղել, և գրում է. «Պելիպը է հարցնել, թե երբ և որքան ժամանակով փոխվել է Նիկեփորիցեսի պաշտոնազրկությունը (և ո՞վ է փոխարինել նրան այդ միջոցին)»¹⁵: Շարունակելով մի քիչ նա գրում է, որ Ժ. Լորանը նշում է բյուզանդացի հեղինակների խոսքերը Խաչատուրի նախկին խիզախ գործերի մասին, որոնք, սակայն, ոչ մի որոշակի դեպքի մասին չեն պարզում, և վկայաբերելով Ուռհայեցու գրածը 1065 թ. Պելիպի քաջագործության մասին՝ եզրակացնում է. «Նշենիկի մօտ Պելիպի մղած ճակատամարտը անսակարկելիորեն իրեն կը շնորհի «քաջության», «մարտիկության» և «պառաքելության» առաքելությունները, նկարագրի գիծեր, գոր Բյուզանդացի պարմիչներ և Լորան կը շնորհեն Խաչատուրի... Ասպարեզին և նկարագրի այս նմանությունը իրատու չէ՞ն քան մեզի մարտերը, որ Պելիպ և Խաչատուր նույն անձն են»¹⁶:

Այս երկու պնդումների առնչությամբ նկատենք, որ նախ Պելիպի և Խաչատուրի նույնացումը որևէ կապ չունի հայ պարմաբանների «ազգասիրության» հետ, որովհետև Խաչատուրին Անտիոքի դուքս և ազգությամբ հայ է համարում բյուզանդացի հեղինակ Արարիկյանը¹⁷: Երկրորդ, եթե խոսքը նույն մարդու մասին է, ապա նրան Մարթեոս Ուռհայեցին շուրջ մեկ դար հետո ճանաչում էր որպես Անտիոքի դուքս՝ անկախ այն բանից 1065 թվականին նա ունե՞ր այդ պաշտոնը, թե՞ սրացել է մի քանի տարի հետո¹⁸: Հասկանա-

12 J. Laurent, Le duc d'Antioche Khatchatur, Byzantinische Zeitschrift, Bd. XXX, 1930, Leipzig, p. 405-411, հայերեն թարգմանությունը՝ Յ. Լորան, Խաչատուր իշխան Անտիոքի 1068-1072, «Հանդես ամսօրեայ», 1930, էջ 303-310:

13 Յ. Լորան, նշվ. աշխ., էջ 306-308:

14 Անդ, էջ 309:

15 Ե. Քասունի, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պելիպ-Խաչատուր և Վասակ Պախլավունի, «Հայկազեան հայագիտական հանդես», 1971, հ. Բ, էջ 125: Նշելով նաև ակնարկում է, որ Նիկեփորիցեսի պաշտոնակցության ժամանակ նրան կարող էր փոխարինած լինել Խաչատուրը:

16 Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 126-127:

17 Նովիսեան Սկիպիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Բարթիլյանի, Երևան, 1979, էջ 376:

18 Պարմիչը նույնպիսի մտքեցում է ցուցաբերել մեկ այլ հարցում: Գրելով 1033 թ. Անիից Մեանի վանք՝ Նովիսեան Կոզմեի մոտ գնացած պարվիրականության մասին՝ նա մեկնողների թվում նշում է «Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ» (Մարթեոս Ուռհայեցի, էջ 76-77), մինչդեռ հայերն է, որ Վասակի որդի Գրիգոր Պախլավունին մագիստրոսության պարիսպ սրացել է ավելի ուշ՝ 1045 թ.: Այսպիսի մտքեցումը բնական է

լի է, որ մինչև Անրիոթի դուքս դառնալը Պիլսոն անհայտ մեկը չէր. նա բյուզանդական ծառայության մեջ գտնվող գործակալներին էր և կարող էր իր գործակալներով մասնակցել Ուռնայում կատարված դեպքերին:

Տարցին անդրադարձել է նաև Ն. Բարթիկյանը Նովիանենա Սկիլիցեսի երկի ու դրա շարունակության հայերեն թարգմանության մեջ՝ Խաչատուրին նվիրված հանգամանալից ծանոթագրությամբ: Վկայակոչելով Արարիկյանի հաղորդումը «Խաչատուրի» հայ և Անրիոթի դուքս լինելու մասին նա գրում է. «Զարմանալիս այն է, որ Խաչատուրի մասին հայկական աղբյուրներում չենք հանդիպում որևէ փոփոխության: Այդ ուսումնասիրողներին դրդել է ենթադրելու, որ Խաչատուրը հայկական աղբյուրներում հանդես է գալիս այլ անվան փոխարեն: Սկսած Չամչյանից ենթադրել են, որ Մարթեոս Ուռնայեցու 1065 թ. փակ հիշատակած Անրիոթի հայազգի դուքս-կառավարիչ Բեխար (Մարթ. Ուռն., էջ 157) հենց Խաչատուրն է: Չամչյանը, այդ նույնացումը կատարելով, գրում էր նաև, որ Բեխար անուն չէ, այլ բյուզանդական վեսպ պարվաստիանը: Չամչյանի ենթադրությունը կրկնում են Բրոսսեն (նրան նա անվանում է Vest Khatchatour: Տե՛ս **Lebeau**, Histoire du Bas-Empire, t. XIV, 18334 p. 441...), Ալիշանը (փոխ նրա՝ Վարդան Բարձրբերդցու Պարմության 105-րդ ծանոթագրությունը) և այլ ուսումնասիրողներ, այդ թվում՝ Ե. Քասունին...: Դեռևս 1929/1930 թթ. Ժ. Լորանսն իր մի հոդվածում (փոխ նրա՝ «Le duc d'Antioche Khatchatour»), ապացուցեց այդ նույնացման անհնարինությունը և հանգեց այն եզրակացության, որ Բեխարը ոչ թե Մեծ Անրիոթի կառավարիչն էր, այլ, հավանաբար, Իսապրիայի Անրիոթի»¹⁹: Իսկ Մարթեոս Ուռնայեցու Ժամանակագրության համապատասխան ծանոթագրության մեջ Ն. Բարթիկյանը նշում է, որ Պիլսոնին «սխալմամբ նույնացնում են Անրիոթի դուքս Խաչատուրի հետ»²⁰:

Այժմ փաստենք, թե ինչ նորություն են բերում վերը նշված ձեռագրերը:

Այսպիսի Մամվկ Անեցու Ժամանակագրության անանուն շարունակողը քաղկեդոնական հայ իշխանին անդրադառնում է երկու կարճ վկայությամբ: Առաջինը վերաբերում է Մանազկերտի ճակարամարտին նախորդած ռազմական իրադարձությունների մի դրվագի, թեև բուն Մանազկերտի ճակարամարտի մասին պարմվում է դրանից առաջ. «ՇԺԹ- (1070) Դեառմենն եկն յարևելս և էառ զՄանծկերտ ի թուրքաց և Ալիսալանն պարերազմեալ յաղթեաց նմա և կալա զնա և դարձեալ ազարեաց ուխտադրութեամբ»²¹: Ոմանք գկոտրիլն Դեառմենին ի թու. Տայոց ՇԺԸ (1069) են գրեալ: Եւ ի ՇԺԹ- (1070) Գողձախմարն»²²: **աւերեաց զՍեւ լեառն և կոտորեաց զնա Գրիգոր Պիլսոն ի դաշտն Նարունոյն ի մամխենուրն»**²³: Սրանից անմիջապես հետո թիվ 2965 ձեռագրում նշվում է Դիոգենես կայսեր գահազրկման, կոտորածի և մահվան մասին («Յայսմ վայրի ոչ հնազանդեալ Դիո-

և արքայաց չէ անգամ մեր օրերի համար: Օրինակ՝ եթե մեկն ասի, որ մարշալ Բաղրամյանը Նայրեանյան մեծ պարերազմի հայրն է գորավարներից էր, դժվար թե նրան ուղղեն՝ ասելով, որ պարերազմն ավարտվել է 1945 թ., իսկ Նովիանենա Բաղրամյանը մարշալի կոչում է ստացել 1955 թվականին:

19 Նովիանենա Սկիլիցես, էջ 376:

20 Ուռնայեցի, էջ 500:

21 Նարվածը թ. 2965 ձեռագրում ավարտվում է «ուխտադրութեամբ հարկին» բառերով (թերթ 104ա):

22 Ձեռագրում գրված է «գողձախմարն»: Կարծում ենք՝ օրաբառն անվան աղավաղված ձև է: Նախավոր է նաև, որ մի անուն է, որի սկզբում նշված է «Գող» մականունը, ինչպես որ այս նույն շրջանում հիշվում է հայ իշխան Գող Վասիլը: Իսկ շարունակությունը կարող է լինել Անուար անվանը մոտ հնչյունափոխված մի անուն:

23 Մարտիրոսյան, ձեռ. թ. 1898, թերթ 85ա:

ժենին ազգն իւր, այլ թագաւորեցոցին զՄիխայլ որդի Դուկծին: Դարձեալ պարերազմեալ Միխայլէ՝ հար զԴիօթանն եւ զօրացն թորձ ագուցեալ նմա ածին առ թագաւորն Միխայլ եւ ի ճանապարհին փորեալ զաչս նորա կուրացոցին հրամանաւ կայսեր եւ յանհնարին խստութենէ կսկծոյն մեռաւ ի ՇԻԱ (1072) թուականն»²⁴:

Երկրորդ վկայությունը իշխանի մահվան վերաբերյալ է. «ՇԻԱ (1072), **ԳՊԻԽԱՐՆ յԱՆՈՐԻՈՒՆՆ ՍԵՂԻՍԵՐԻՆ ԺԱՌԱՅԵ ՐԱՐ**»²⁵:

Այսպիսով՝ հայկական աղբյուրում առաջին անգամ հանդիպում ենք իշխանի ամբողջական անվանն ու մականվանը՝ **Գրիգոր Պիխար**²⁶: Նախկանական է, որ այս աղբյուրը պարմիչների մոտ պահպանված փրկությունների համեմատ իշխանի մականունն ավելի ճիշդ փառադարձությամբ է մատուցում՝ Պիխար, քանի որ, ինչպես փեսանք, այն ծագում է հունարեն «Էպիխարես» բառից:

Թվում է, թե նորահայտ աղբյուրը, որտեղ իշխանը կոչվում է Գրիգոր Պիխար, ամբողջովին համապատասխանում է այն փրկությանին, որը մերժում է նրա եւ Խաչատուրի նույնացումը: Սակայն, մյուս կողմից, այդ նույն վկայության մեջ հիշարակված դեպքերը ժամանակով եւ որոշ մանրամասներով համընկնում են Խաչատուրի մասին հայտնի փվյալներին: Այսպես՝ Նովհաննես Սկիլիցեսի շարունակողը, նկարագրելով 1070 թվականի իրադարձությունները, երբ սելջուկների դեմ պարերազմելու համար Արենեյը էր եկել կայսր Ռոմանոս Դ-ի գլխավորությամբ, հետևյալ փրկությունն է հայտնում. «Կայսրը փազմաներից մի գործնառ Կիլիկիա ուղարկեց՝ միանալու Անտիոքի դուքս Խաչատուրին, մի քաջարի մարդու, որ դեռ անցյալում ցույց էր փվել իր բազում աչքի ընկնող առաքինությունները՝ հրաման փառվ նրան փութանալի Մուպուսեփայում (Մամեստիա, Մսիս – Կ. Մ.) ընդդիմակայել հակառակորդին, քանզի սպասում էր, որ թուրքերն այնպեղից պետք է անցնեն, այնպեղ սպասել նրանց եւ ամեն գնով ջարդ փառ: Նրանք, Սելեուկիայի լեռների վրայով անցնելով, Տարսուսի դաշտում ջարդ կերան, հենց այդպեղ պարահամար հայերին հանդիպելով՝ գրեթե ողջ ավարը կորցրին: Թշնամիները, իմանալով հռոմայեցիների Մուպուսեփայում բանակելու մասին, առանց ժամանակ կորցնելու, ինչքան հնարավոր էր հանգստանալով Վարդուխի վանքում, զիջելով ճանապարհ ընկան եւ անցնելով Սարվանդիկոն լեռը, ինչպես եւ շուրափույթ՝ Նալեպի սահմանները, մի կերպ վրանգից արձան»²⁷:

Ինչպես վերը փեսանք, նույն 1070 թվականի դիմաց մեր ձեռագրերում հավելում կա փառողը ունի էր. «Գողձախմարն աւերեաց զՄեւ լեառն եւ կոպորեաց գնա Գրիգոր Պիխարն ի դաշտն Նարունոյն ի մամխենուրն»: Այսպեղ կարող է լինել երկու ենթադրություն կամ

24 Մարենադարան, ձեռ. թ. թիվ 2965, թերթ 104ա, հմմտ. Մամուլի քահանայի Անեցոյ Նաւաթմուր, էջ 114:

25 Մարենադարան, ձեռ. թ. 1898, թերթ 85բ:

26 Նկատենք, որ Գրիգոր անունն ընդհանրապես միջնադարյան Նայաստանում շատ փարածված էր, եւ այդ անունով գործիչներն առավել հաճախ անվան հետ նաեւ մականունով են հիշարակվում: Խոսքը վերաբերում է ինչպես հոգևորականներին (կաթողիկոսներ՝ Գրիգոր Վկայասեր, Գրիգոր Տղա, Գրիգոր Ապիրար, վարդապետներ՝ Գրիգոր Տուրեղոյի, Գրիգոր Մանունիկ, Գրիգոր Խույ, Գրիգոր Թորակերի որդի, Գրիգոր որդի Աբասա), այնպես էլ աշխարհականներին (Գրիգոր Նամգե, Գրիգոր Մուփան, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Խուցես եւ այլն): ԺԲ-ԺԳ դարերի դարի հայ պարմիչները ԺԱ դարի մի նշանավոր իշխանի հիշարակում են միայն մականունից ծագող երկրորդ անվամբ՝ Ապիրար, մինչդեռ իր հիմնած Կեչառիսի վանքի արձանագրության մեջ նա իրեն կոչում է Գրիգոր (Կ. Մաթեոսյան, Գրիգոր Ապիրար Մագիստրոսը եւ նրա փոխը 11-րդ դարում, «Քաներ Մարենադարանի», թ. 18, Երևան, 2008, էջ 67-93):

27 Նովհաննես Սկիլիցես, էջ 231-232:

Սկիզբից հետո շարունակող, և այս փնտրությունը վերաբերում է նույն դեպքին, կամ փաթեթի իրադարձություններին:

Նախ բնական առաջին փաթեթակիր: Երկու փնտրությունների մեջ ընդհանուր է նախ թվականը, երկրորդ՝ գլխավոր իրադարձության՝ ճակատամարտի փուլը, որի դաշտը լինելու ընդգծված է երկուսերն (առաջինում այն «Տարսունի դաշտ» է, երկրորդում՝ «ի դաշտն Նարունյն»): Վերջապես, այս իրադարձության ժամանակ նույնն են բյուզանդական և հայկական աղբյուրներում վկայված թշնամիները, մի կողմում՝ ավարառու թուրքերը, մյուսում՝ հաղթող հայերը:

Նարունի, Նարունին բերդավանը գտնվում է Կիլիկիայում՝ Սարվանդիքարից հյուսիս, Մարաշից հարավ²⁸, և այսօրվա պարբեր է լինի նաև համանուն դաշտը: Նայ հեղինակը, դեպքին լավարկող լինելով, նաև կոնկրետացրել է կովի փուլը՝ «ի մամխեմուրն», որ կարծում ենք՝ նշանակում է մամխենի (փշուր վայրի սալորենի) ծառերով փնտրված (ինչպես, օրինակ, եղեգնուր): Նարկանշական է, որ, Սկիզբից հետո շարունակողի համաձայն, մարտից հետո սելջուկները Նալեյի կողմը նահանջեցին Սարվանդիքում, որն ակներևորեն Սարվանդիքաբուն է, որտեղից դեպի արևելք միակ ճանապարհն անցնում է Ամանուսի (Սև լեռան) լեռնանցքով:

Նույն պարմիջի խոսքերը, թե թուրքերը ջարդ կերան «հենց այդպեղ պարահամար հայերին հանդիպելով», կարծում ենք՝ կարելի է հասկանալ երկու ձևով: Առաջին, որ Խաչատուրն իր հայ գորականներով ջարդեց նրանց (դեպքն այսպես է ընկալել Ղ. Ալիշանը²⁹): Երկրորդ, դա փնտրված հայերի մի ջոկար էր³⁰: Մակայն, ինչպես պարզորոշ երևում է պարմիջի խոսքերից, այդ շրջանի բոլոր զորքերը ենթարկվում էին հենց Խաչատուրին, որին հույն պարմիջը, ոչ առանց պարծառի, «քաջարի մարդ» է կոչում:

Երկու սկզբնաղբյուրների միջև եղած հիմնական անհամաձայնությունն այն է, որ, ըստ հայկական տեքստի, ավարառուները եկել են Սև լեռան կողմից, այսինքն՝ արևելքից: Մակայն այս փաթեթությունը կարող է բացատրվել նրանով, որ հայ հեղինակը կամ նրա աղբյուրը ծավալուն պարմություն չեն շարադրել, այլ մեկ հակիրճ նախադասությամբ արձանագրել են հայկական միջավայրի համար էական երկու փաստ: Առաջինը՝ Սև լեռան հայաբնակ շրջանի ավերումն է, որ կարող էին անել Կիլիկիայից դեպի Նալեյի կողմը նահանջող թուրքերը, իսկ մյուսը՝ հայկական միջավայրում փարաված այն փնտրությունը, որ թուրքերին ջարդել է Գրիգոր Պիսարը: Նույնպես է, որ այսօրվա գործ ունենք երկու փաստի երևառաջության հետ:

Ինչ վերաբերում է կովի փուլին, որը, ըստ բյուզանդացի հեղինակի, Տարսունի դաշտն է, ըստ հայ հեղինակի՝ Նարունիի դաշտը, ապա այդ փաթեթությունը կարող է առաջանալ փարաված ավելի կամ պակաս ծանոթ լինելուց: Մասնավորապես Կոստանդնուպոլսում ապրող մարդը կարող էր Կիլիկիայի հիշյալ շրջանի ամենանշանավոր քաղաքի՝ Տարսու-

28 Նայաստանի ազգային արխիվ, էջ 47, 48, Մարի-Աննա Շեռալիե, Կիլիկյան Նայաստանի և հոգևոր-ապական միաբանությունների փոխհարաբերությունների պարմությունից, Երևան, 2007, էջ 25, 33, 35, 50:

29 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 46:

30 Այդպիսի ենթադրություն է անում Ն. Բարթիլյանը՝ ելնելով Արարիկյանի հայտնած մի փնտրությունից, ըստ որի, «Սելեուկիայի լեռնային շրջաններում բնակվող հայերը» հրաման էին ստացել կիրճերում հարձակվելու և վնասելու թուրքերին (Նովիսկոյի Սկիզբ, էջ 376):

նի անունով կոչել այդ դաշտը (դաշտային Կիլիկիան ընդհանրապես), մինչդեռ ավելի մոտ բնակվողը կարող էր փնտրել ավելի որոշակի դարձնել³¹:

Այժմ դիտարկենք երկրորդ փաթեթակը. Սկիլիցեսի շարունակողի և նորահայտ աղբյուրի փոփոխությունները վերաբերում են նույն թվականին կատարված, բայց միանգամայն փաթեթ դեպքերի: Բյուզանդացի հեղինակի հայտնածն ընդունում ենք այնպես, ինչպես որ կա, իսկ հայ հեղինակը նշում է, որ 1070 թ. մի ավարառու գործում «Գողձախմարի» գլխավորությամբ հարձակվում, ավերում է Սև լեռան շրջանը, ապա Նարունիի դաշտում (արդեն Կիլիկիայում) նրան ջարդում է Գրիգոր Պիլիպը:

Իհարկե կարող էին նման դեպքեր լինել: Բայց այսօրեղ հարց է առաջանում, թե այդ թվականին ո՞վ էր Կիլիկիայում գտնվող այն հայը, որը ձեռքի փակ համապատասխան գինավորական ուժեր ուներ և կարող էր այդպիսի հաղթանակ փանել: Ինչպես վերը փաստեք, Կիլիկիան սելջուկներից պաշտպանելու համար ոչ միայն գործ, այլև հատուկ կայսերական հրաման սրացած մարդը հենց Խաչատուրն էր:

Ծանոթանալով բյուզանդացի հեղինակներին՝ Խաչատուրի մասին պարզված մյուս փոփոխություններին: Նովհաննես Սկիլիցեսի շարունակողը բավական մանրամասն պարզում է, թե ինչպես 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում պարտված ու գերի ընկած, ապա սուլթանի բարեհաճությամբ ազատ արձակված Դիոգենես կայսրը, երբ ուզում է Կոստանդնուպոլիս վերադառնալ, բայց իմանում է, որ այնպեղ արդեն նոր կայսր է հռչակվել, փորձում է կողմնակից ուժեր ժողովել, և այդ ժամանակ նրան աջակցություն է ցուցաբերում Խաչատուրը՝ իր մոտ՝ Կիլիկիա փանելով: Նոր կայսրը Անդրոնիկոս զորավարին ուղարկում է Դիոգենեսի դեմ՝ Կիլիկիա, «որպեղ նրան ընդդիմակայում է Խաչատուրը, բայց մի փոքր մարտնչելուց հետո գերվում է Անդրոնիկոսի զինվորների կողմից»³²: Դրանից հետո այս զորավարին է հանձնվում նաև Դիոգենեսը, որին երդումներով հավաստիացնում են, որ նրանից միայն գահից հրաժարվել է պահանջվում: Մակայն հետո դաժանաբար կուրացնում, փանջում և կիսամեղ դարձրած արքայում են մի փոքր, որպեղ շուրջով կնքում է իր մահկանացուն:

Խաչատուրի գերության մեղ եղած ժամանակին վերաբերող մի դրամատիկ և գեղարվեստական փաթեթ ունեցող պարմություն է փոխանցում Նիկեփոր Բրիեննիսը³³, որից երևում է, որ ի վերջո Անդրոնիկոսը նրան պահում էր «անկալանք կալանքի մեղ»³⁴: Դա վերաբերում է 1072 թվականին և վերջին փոփոխությունն է Խաչատուրի մասին³⁵:

31 Նույն կերպ, օրինակ, Նյաստրանից հեռու ապրող մարդը կարող է ասել, որ 1918 թ. մայիսին հայերը թուրքերին հաղթել են Արարատյան դաշտում, իսկ այսօրեղ ապրողը գիտի՝ Մարդարապատի դաշտում: Երկուսն էլ ճիշտ են, միայն երկրորդը փնտրել ավելի որոշակի գիտի:

32 Նովհաննես Սկիլիցես, էջ 244:

33 Ըստ այս հեղինակի՝ Խաչատուրը փախչում է գերությունից, թաքնվում անբառում, սակայն նրան բռնում է մի գինվոր և ուզում սպանել: Խաչատուրի խնդրանքին անսալով՝ նա բավարարվում է նրա բոլոր հանդերձները խլելով և մերկ բաց թողնելով: Ներսեղ նրան բռնում է մեկ այլ գինվոր, սրան էլ իբր Խաչատուրը խնդրում է իրեն փանել Անդրոնիկոսի մոտ: Վերջինս նրան հագուստ է փախի և ընդունում ինչպես վայել է բաց զորականին, ինչից զգացված Խաչատուրը նրան ասում է, որ անբառում թաքցրել է մի շատ թանկագին թաք և դրա փնտրել ասելով՝ այն նվիրում է Անդրոնիկոսին: Սա էլ իր հերթին այդ հազվագյուտ թաքը նվիրում է թագուհի Մարիային (Նովհաննես Սկիլիցես, էջ 381):

34 Անդ:

35 Տե՛ս G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, vol. 1-2, Lisabonne, 2003, p. 44-45. I. Տեր-Պետրոսյանը 1078 թ. սպանված Անդրիոքի դուքս Վասակ Պաիվալունու մասին ծանոթագրության մեղ նշում է. «Վասակից առաջ, 1069-1072 թվականներին, Անդրիոքն ունեցել է նաև մի այլ հայ դուքս՝ Խաչատուր անունով» (I.

Իսկ հայկական նորահայր աղբյուրն ասում է, որ Գրիգոր Պիլսպին իր ծառաների ձեռքով խեղդամահ արվեց 1072 թվականին Անդրբլուն բերդում: Եթե դա նույն Խաչատուրն է, ապա նրա այսօրինակ վախճանը համահունչ է դեպքերի փրամաքանությանը՝ նկարի ունենալով, թե ինչպիսի վախճանի արժանացավ Դիոգենես կայսրը: Դժվար է հավատալ, որ անպարիժ պիլսպին մնար վերջինիս կողմն անցած և անգամ գինված դիմադրություն ցուցաբերած Խաչատուրը: Եթե անգամ նրան ներել են ու պահել «անկալանք կալանքի մեջ», ապա իշխանությունից, պարիվներից ու հեռանկարից զրկված, թերևս գերության մեջ առողջությունն էլ կորցրած³⁶ Խաչատուրին ի վերջո պիլսպի բաժին հասներ մոտավորապես այնպիսի վախճան, որն ունեցավ Գրիգոր Պիլսպը:

Առայժմ մենք Խաչատուր և Գրիգոր Պիլսպ անունները ներկայացնում ենք զուգահեռաբար, որովհետև փեսականորեն չի կարելի բացատրել, որ եղել են այդպիսի փարբեր մարդիկ: Բայց այդ դեպքում պետք է ընդունել, որ նրանք երկուսն էլ նույն ժամանակ մասնակցել են միևնույն իրադարձություններին, մասնավորապես 1070 թվականին Կիլիկիայում սելջուկների դեմ սղված կռիվներին: Նովհաննես Սկիլիցեսի շարունակողը Խաչատուրին կոչում է «Անրիոքի դուքս»³⁷, Մարթեոս Ուռհայեցին էլ Պիլսպին անվանում է «պուկ Անրիոքայ քաղաքին»³⁸: Այս նույնությունն էլ կարելի է պրոքել՝ կարծելով, որ մի դեպքում խոսքը Մեծ Անրիոքի, մյուսում՝ Իսավրիայի Անրիոքի մասին է: Բայց այդ դեպքում էլ պիլսպի ընդունել, որ մոտավորապես նույն ժամանակաշրջանում երկու Անրիոքն էլ հայազգի կառավարիչ են ունեցել, ընդ որում երկուսն էլ դուքսի հանգամանքով:

Այս ամենը քիչ հավանական է: Մյուս կողմից, մի շարք փյալներ հուշում են, որ նկարագրված բոլոր դեպքերը մեկ հերոս ունեն, և դա Շիրակից Կիլիկիայի սահմանները գաղթած ու քաղկեդոնականություն ընդունած միևնույն հայ իշխանն է: «Բեխտն... կնքեսա հոռոմ»³⁹ գրված է Վարդան Արևելցու հին օրինակներից մեկում: Մարթեոս Ուռհայեցին էլ նշում է, թե «թագաւորն Յունաց բռնադարեաց գնաւ և արկեալ կնքեաց գնաւ Նոռոմ հաւարն»⁴⁰: Արդյո՞ք այս դավանափոխության ժամանակ նա չի ստացել իր երկրորդ անունը՝ «Խաչատուրիոս», ինչպես հիշարակվում է բյուզանդական աղբյուրներում:

Դավանությունը փոխելիս (կրկնամկրտությամբ) անունը փոխելու փաստ է արձանագրված ԺԱ դարի «Վարք Նովհանի և Էփթիմի» երկում. «Դարձյալ եկավ Գյուրպելը՝ Ջոջիկի (հայ իշխան - Կ. Մ.) գանձապահների ավագը, և մկրտվեց, քանզի հայ էր, և Արսեն կոչեցին» (Ի. Ջավախիշվիլիու հրատ., Թբիլիսի, 1946, էջ 41)⁴¹: Նիշենք նաև բյուզանդական և հայկական աղբյուրներում բազմիցս Փիլարպոս կամ Ֆիլարեպոս անունով հայրնի նույն այս ժամանակաշրջանի հայրնի գործիչ, քաղկեդոնականություն ընդունած Վարաժմունի

Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 419):

36 Նիշենք Մ. Ուռհայեցու նշումը Պիլսպի՝ սպանությունից առաջ հիվանդ լինելու մասին (Մ. Ուռհայեցի, էջ 230):

37 Նովհաննես Սկիլիցես, էջ 231:

38 Ուռհայեցի, էջ 170:

39 Վարդան Արևելցի, էջ 109, հմմտ. «...կնքեսա ի Նոռոմ» (Մեծին Վարդանայ Բարձրաբերդցու..., էջ 140):

40 Ուռհայեցի, էջ 230:

41 Այս փոխությունը մեզ փրամաքելու համար շնորհակալություն ենք հայտնում պարմական գիտությունների դոկտոր Պարույր Մուրադյանին (հեղ.):

իշխանին, որի վաղ շրջանի արձճն կնիքի վրա նշված է նրա հայկական անունը՝ Վահրամ⁴²:

Արդյո՞ք քաղկեդոնականություն ընդունելն ու կրկնամկրտությամբ նոր անուն ստացած լինելը չէ պարճառը, որ դավանանքի հարցում նախանձախնդիր մեր պարմիչները հրաժարվում են Խաչապուրիոս-Խաչապուրի անունը փախցնելու⁴³ և միայն պաշտոնից աժանցված մականունն են հիշում: Նախկին ժամանակն է, որ եւ Մարթնոս Ուռհայեցին, եւ Վարդան Արեւելցին, այս քաջ և առաքինի իշխանին հիշատակելով, հիմնականում պարմում են հույների՝ նրան արած վատությունների, դավաճանության և վերջապես սպանության մասին, այն էլ խոստովանահայր կրոնավորի ձեռքով: Ենթադրեք՝ հասկանալի է. քաղկեդոնական դառնալով և հույներին ծառայելով՝ նրանցից երախտագիտություն չես գրնի, այլ դառնություն ու մահ:

Իսկ ահա նորահայր վկայության անանուն հեղինակն իր առջև նման «քարոզչական» խնդիր չի ունեցել, այդ պարճառով հիշատակում է իշխանի իրական անունը՝ Գրիգոր Պիխպ, ոչ էլ նրա մահվան դեպքում առաջնային է դարձնում քաղկեդոնական կրոնավորի պարագան: Տեղին է հիշել, որ հայրնի բյուզանդացի Ն. Յորգան, հղելով մեկ այլ հեղինակություն, գրում է, որ Խաչապուրը սպանվել է բյուզանդական մի գործակալի ձեռքով 1072 թ.⁴⁴: Սա զարմանալի ճշտությամբ համընկնում է հայկական աղբյուրում նշված Գրիգոր Պիխպի սպանության թվականի հետ: Ինչպես վերևում արևանք, «գործողված» մարդասպանի (կայսեր կողմից ուղարկված խոստովանահոր) պարագան շեշտում են նաև հայ պարմիչները: Մեծ հաշվով այս տեղեկությունը հակասության մեջ չէ նոր աղբյուրի հետ, քանի որ մարդասպան իր սև գործը չէր արել Անդրիոն հասնելուն պես, այլ նախ դարձել էր իշխանի վստահությունը շահած ծառաներից մեկը:

Նկարագրիք է, որ նույն 1072 թ. Միքայել Է Դուկաս կայսրը Ապոլարիպ Արծրունուն նշանակեց Կիլիկիայի սարապեզոս⁴⁵: Ըստ երևույթին այս ժամանակաշրջանում հայկական տարրի, նաև գինուծի ներկայությունը Կիլիկիայում այնքան զգալի էր, որ երկրամասն ամբողջովին վերահսկելու համար կայսերն անհրաժեշտ էր տեղում հայազգի վստահելի պաշտոնյա ունենալ: Եթե 1070 թ. Ռոմանոս Դիոգենեսը տեղի գորահրամանատարությունը հանձնել էր Խաչապուրին, ապա 1072-ին Միքայել Դուկասը, փաստորեն, նրան փոխարինել էր իրեն հավատարիմ մարդով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ հայկական աղբյուրներում նշված Գրիգոր Պիխպը և բյուզանդացի հեղինակների հիշատակած Խաչապուրիոս-Խաչապուրը հանդես են գալիս բազմաթիվ ընդհանրություններով: Երկուսն էլ հայ են, քաղկեդոնական, զինվորական, ապրել են նույն ժամանակաշրջանում ու տարածքում, երկուսն էլ հիշվում են

42 V. Laurent, Les sceaux Byzantins du Médailleur Vatican, Citta del Vaticano, 1962, p. 117, N 2.

43 Ըստ Ե. Քասունու՝ հայ պարմիչների՝ իշխանի անունը ջրալու «պարճառը պէտք է փնտրել անոր յունադասանութիւնը ընդունած ըլլալուն մէջ» (Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 127):

44 N. Jorga, Geschichte des Osmanischen Reiches, Gotha, 1908, S. 68 (Տե՛ս <http://www.archive.org/details/geschichte-des-osmanischen-reiches>): Ն. Յորգան հղում է՝ Gfrörer, Byzantinische Geschichte III, S. 841-842: Յավոք, այս երախտագիտությունը կամ դրա տեղափոխումը համապատասխանում մեզ չհաջողվեց գրնել:

45 Արդյունքում նա «սիրում էր Տարսոն, Մոփս, Ադանա քաղաքներին, ինչպես նաև Լամբրոն և Պապեռոն բերդերին» (Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 416):

որպես Անտիոքի դուքս, նկատելի է նաև երկուսի «նկարագրի նմանությունը»⁴⁶ (քաջություն, ազնվություն, հավատարմություն կայսրին):

Նորահայր աղբյուրը հայտնում է, որ 1070 թ. Գրիգոր Պիխար Նարունիի դաշտում ջարդել է ավարառու թուրքերին, մի փղեկություն, որը զուգադրվում է Նովհաննես Սիլվիցեսի շարունակողի՝ Խաչատուրի մասին պատմածի հետ, որին Ռոմանոս Դիոգենես կայսրը նույն թվականին հանձնել էր Կիլիկիայում գրավող բյուզանդական զորքի հրամանատարությունը: Բնագրում Գրիգոր Պիխարի մղած կռվի մասին փղեկությունը զեփեղված է Ռոմանոս Դիոգենես կայսր 1070-1071 թթ. գործունեությանը վերաբերող երկու հափվածների միջև, որը հուշում է, թե խոսքն այս շրջանում կայսրը հետ առնչություն ունեցած մարդու մասին է:

Նույն աղբյուրում Գրիգոր Պիխարի մահվան թվականը՝ 1072, համընկնում է բյուզանդական աղբյուրներում Խաչատուրի անվան վերջին հիշատակության կամ նրա մահվան մասին եղած փղեկությունների հետ: Միանման են մահվան (սպանության) հանգամանքները: Այս ամենը թույլ են փալիս եզրակացնելու, որ Անտիոքի դուքս Խաչատուրը նույն Գրիգոր Պիխարն է:

Պատմիչ Արիստակես Լասարիվերցին 11-րդ դարի 70-ական թվականներին գրած իր պատմության մեջ հայտնում է, որ Բագրատունյաց թագավորության անկման (1045 թ.) հետևանքով Անի-Շիրակի հայ արհեստավարժ զինվորականությունը հայրենագուրկ ու թափառական էր դարձել. «Նեմեկագորն անտերունջ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյսս, ոմն ի Վիրս: Սեպուծ գունդն ազարաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մոնչեն ուր եւ են իբրեւ գկորխնս առիւծուց...»⁴⁷: Գրիգորն ամենայն հավանականությամբ հենց այս ժամանակ Շիրակից հեռացած հայ ազատներից էր, կամ ինչպես Մարթեոս Ռոմայեցին է գրում, «իշխանն Նայոց... ի Տանէն Շիրակայ», որն իր գորականներով ծառայության էր անցել բյուզանդացիների մոտ: Եթե ենթադրենք, որ Շիրակից հեռանալիս նա մտաւորապես 30 տարեկան էր, ապա մահավան ժամանակ 60-ին չհասած փղամարդ պիտի լիներ: Ըստ այդմ նա ներկայացուցիչն էր մի սերնդի, որն ակնադրես էր եղել Անիի ողբերգական անցքերին, հայկական պետականության անկմանը, եւ որը, թեւեւ համակերպվել էր նոր իրավիճակին, սակայն հոգում վիրավորանք էր կրում⁴⁸:

Բյուզանդիայում Գրիգորը հայտնվել է դժվարին երկրնորանքի առջև, որը հայադավանությունից հրաժարվելն ու կրկնամկրտությունն էր: Ներաբրքի է, որ եւ Մարթեոս Ռոմայեցին, եւ Վարդան Արեւելցին նշում են, թե իշխանը քաղկեդոնականությունը միայն առերես էր ընդունել. «Բայց նա ի ծածուկ զհայրենի հաւարն իւր պաշարէր զսրբոյն Գրիգորի»⁴⁹, «ոչ պահէր զօրէնս Նոռմոց»⁵⁰: Դժվար է համոզված լինել, որ սա ամբողջովին համա-

46 Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 126-127:

47 «Պատմություն Արիստակեսի Լասարիվերցու», աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 60:

48 Այսպիսի հոգեվիճակի դրսևորման հարկանշական օրինակ է Անիի վերջին թագավոր Գագիկ Բ-ի ճակատագիրը Բյուզանդիայում, որտեղ նա թեւեւ կալվածքներ էր ստացել, բայց ազգային եւ դավանական հողի վրա մշտապես բախվում էր հույների հետ, որն էլ նրա սպանության պարճառը դարձավ: Այս փաստերից հերաբրքական է նաև Գորգ Անեցու վրեժխնդրության հավասարի դեպքը, որի մասին պատմում է Մարթեոս Ռոմայեցին (տե՛ս Ռոմայեցի, էջ 242-243):

49 Ռոմայեցի, էջ 230:

50 Վարդան Արեւելցի, էջ 109:

պարասխանում է իրականությանը, սակայն հնարավոր է, որ այդ պնդումներն առաջացել են Գրիգորի՝ ազգային-կրոնական պարզախոհության մի ինչ-որ դրսևորումից, և գուցե հենց այս հարթության մեջ պետք է որոնել քաղկեդոնական դառնալու ժամանակ նրա ընդունած Խաչատուրիոս անվան ծագումը: Ինչպես րեսանք վերը նշված օրինակներում, կրկնամկրպոված երկու հայերն սրացել են հույների համար միանգամայն հասկանալի Արսեն և Ֆիլարեոս անունները, իսկ Գրիգորը կոչվել է Խաչատուրիոս, որը Խաչատուրն է՝ հունարեն արքաբերմամբ: Այսօր դժվար է ստույգ ասել, թե ինչ հանգամանքներում է հարկապես այդ անունն ընդունվել, սակայն շար հնարավոր է, որ դա եղել է հենց Գրիգորի խնդրանք-ցանկությամբ: Նայավանդ այդ անունը, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում, պիտի վկայեր այն կրողի հայ-քրիստոնյա լինելու մասին, եթե անգամ պարմությունը նրա վերաբերյալ չպահպաներ ուրիշ ոչինչ՝ անունից բացի: